Ավագյան Ա. - Արժեքավոր նվեր. Ազգային պատկերասրահը հարստացավ Վանո Խոջաբեկյանի եւ Սեդրակ Առաքելյանի 32 աշխատանքով - թերթ, «Հայաստանի Հանրապետություն», Ե., 20.03.2010

Երկու տարի առաջ Երեւանի գեղարվեստի ակադեմիայում նորոգման աշխատանքներ կատարելիս, հայտնաբերվեցին Վանո Խոջաբեկյանի (1875–1922թթ.) եւ Սեդրակ Առաքելյանի (1884–1942թթ.) 32 գրաֆիկական աշխատանքներ։

Մարտի 19–ին Հայաստանի ազգային պատկերասրահում գտածոներն առաջին անգամ, մեկական սրահում ցուցադրությամբ ներկայացվեցին հանրությանը։

Պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը գեղարվեստի ակադեմիայի հասցեին շնորհակալական խոսքեր ասաց. «Մեր պատկերասրահը շատ բարեգործներ ունի, որոնք անհատներ են եղել եւ կան, սակայն, որ մի ամբողջական կազմակերպություն հանդես գա այդ դերով՝ սա առաջին դեպքն է։ Ակադեմիայի ռեկտոր պարոն Իսաբեկյանի այս նախաձեռնությունը իսկապես շատ ազնիվ քայլ է»,–ասաց նա։

«Կարծում եմ, որ ճիշտ որոշում կայացրինք այս գործերը նվիրելով պատկերասրահին։ Դա արեցինք ոչ միայն այն բանի համար, որ իմ հայրը՝ Էդվարդ Իսաբեկյանը, երկար տարիներ եղել է այս հաստատության տնօրենը, այլեւ այն մտահոգությամբ, որ գրաֆիկական աշխատանքները պահել–պահպանելու եւ նաեւ դրանց խնամքի համար միակ տեղը պատկերասրահն է»,–ասաց գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը։

Ռեկտորը ներկաներին տեղեկացրեց, որ նորոգման աշխատանքներ կատարելիս հայտնաբերվել են նաեւ ռուս եւ եվրոպական հեղինակների գրաֆիկական թերթեր, որոնք նույնպես հետաքրքրություն են ներկայացնում։

Ընծա բերված գործերի մասին խոսեց նաեւ պատկերասրահի գրաֆիկայի բաժնի վարիչ Վիկտորյա Բաղալյանը՝ դրանց մի զգալի մասը համարելով խիստ հետաքրքրական ազգային նկարչության համար։ Նա հիշատակեց Հարություն Հազարյանի (ԱՄՆ) կողմից 1942 թվականին Նյու Յորքում կազմակերպված՝ Վանո Խոջաբեկյանի գծանկարների ցուցահանդեսը, որը դիտելիս մեծանուն Արշիլ Գորկին ծնկի է իջել։ Դրանցից 35 աշխատանք Հազարյանը 1966 թ. նվիրել է պատկերասրահին։

Նվիրատվության արժեքը բարձր գնահատեց նաեւ ՀՀ վաստակավոր նկարիչ Լեւոն Կոջոյանը՝ այն անվանելով պատկերասրահի հարստության մաս եւ շնորհակալություն հայտնեց ակադեմիային։

«2009 թվականին լրացել է Սեդրակ Առաքելյանի ծննդյան 125–ամյակը, այս տարի՝ Վանո Խոջաբեկյանի ծննդյան 135–ամյակը, ուստի այս նվիրատվությունները, որոնք համալրում են երկու մեծ արվեստագետների հավաքածուները, թող որ նաեւ հարգանքի տուրք լինեն նրանց հիշատակին»,–«ՀՀ»–ի թղթակցին ասաց Արամ Իսաբեկյանը։

Ա. ԱՎԱԳՅԱՆ

http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20100320_5&flag=am